

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ»:

Կամ Tiflis, Rédaction «Mschak»:

Տէլեֆոն № 258:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է տմեն լեզուով:

Գաղտնաբերութիւնների համար վճարում են

հարկաւորութիւնները տարեկան 10 կոպեկ:

Տէլեֆոն № 258:

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հերթական հարցերից մէկը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ: Սեւ ծովի ափերում, Գաղթականների վերադարձը, Մատենագրութիւն, Նամակ նրանցից, Նամակ խմբագրութեան, Նամակ խմբագրութեան, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ, Պարսկահայերի կրթական գործը, Լեւոնի եպիսկոպոսութիւնը Ամերիկայի մէջ, Արաբներ լուրեր.—ՀԵՒԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՆԱԿԱՆ ԴԱՐԱՆ:

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻՑ ՄԵԿԸ

Մեր սահմանակից Փոքր-Ասիայի ազգաբնակչութեան համար հերթական է դարձել տեղական արգելւանագործութեան զարգացման հարցը: Մուշի, Բուլանի, Վասպուրականի գիւղացիները իրարանջիւղ տարի մեծ քանակութեամբ պանդխտութեան են ուղարկւում արտաքին աշխատանք գտնելու և փող ձեռք բերելու նպատակով: Նրանց մի նշանաւոր մասն էլ գալիս է Անգլիոյ վրաս և այստեղ մշակութեամբ և ուրիշ գործերով զբաղվում:

Մակայի վերջին ժամանակները Փոքր-Ասիայի տեղական վարչութիւնը հաշտ աչքով չէ նայում գիւղացիների պանդխտութեան վրա, արգելք է լինում նրանց հեռանալուն իրանց ծննդավայրերից և ստիպում է, որ նրանք բաւականանան իրանց տեղական գրադուներով և աշխատանքներով: Պանդխտութիւն զննողների մեծ մասը պատկանում է երկրաբան գիտնականների և արհեստներից գիտէ միայն անպիսիները, որոնք ունեն տնային նշանակութիւն: Ազգաբնակչութիւնը սեփական հողով և արհեստներով կարողանում է ապահովել տնային պիտույքները, բայց չէ կարողանում շատ մթերքներ վաճառահանել և փող ձեռք բերել իր տուրքերը հատուցանելու համար:

Այժմ, երբ արգելքներ են յարուցված պանդխտութեան դէմ և ժողովուրդը պէտք է սովորի իր ծննդավայրի շրջանում, անհրաժեշտ է, որ տեղական արդիւնաբերութիւնը սկսէ կատարելագործվել և զարգանալ, որ նոր արհեստներ, նոր գիտութիւն, նոր հմտութիւններ պատասխանեն երկրի մէջ, որոնց շնորհիւ կարելի դառնար երկրի մէջ աւելացնել աշխատանքի աղբիւրները և վաճառահանութեան մթերքները:

Թէ տեղական գործող մարմինները և թէ Կ. Պոլսի զեկավարող շրջանները պարտաւոր են առանձին ուղղորդութիւն դրանք երկրի ներկայ վիճակի և նրա նոր պահանջների վրա և միջոցներ ձեռք առնել զարգացնելու տեղական արդիւնաբերութիւնը և տարածելու նոր արհեստներ, բանալով աշխատանքի նորանոր աղբիւրներ ազգաբնակչութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ

ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐՈՒՄ

Վերջին ուռւ-թիւքական պատերազմից յետոյ թիւքիայից սկսեց պանդխտների մի մեծ հոսանք դէպի Ռուսաստան: Այդ պանդխտները մեծ մասամբ հողագործ դասակարգից բաղկացած հայեր եւ յոյներ էին, որոնք հաստատվեցան Սեւ ծովի ափերում՝ սկսած Բաթումից մինչև Օդեսա:

Հաստատվելով այդտեղ՝ դրանք մեծ զարկ տուին այս կողմերի հողագործութեանը եւ մասնաւորապէս ծխախոտի արդիւնաբերութեանը, որը մինչև այդ ժամանակ կարելի էր անել գոյութիւն չունէր այս կողմերում եւ որը հեռագնեւ գրաւեց մեծ կարուստաւորների եւ տեղային գիւղական հասարակութիւնների ուղղորդութիւնը:

Վերջիններս գալով ծխախոտի արդիւնաբեր-

րութեան տուած մեծամեծ օգուտներ՝ սկզբում այդ նորեկներին տուին բաւական գիւթութիւններ՝ աւելի ընդարձակելու եւ աւելի արդիւնաւէտ դարձնելու գիւղատնտեսութեան այդ ուղղութեամբ: Ընդհանուր ընդհանուր էլ, ժամանակի ընթացքում չփոխելով նրանց հետ եւ մօտիկոց ծանօթանալով այդ նոր գրադուների հետ, փորձեցին պարագլուխ դրանց: Բայց այդ չափովեղ տեղացիներին, որովհետեւ ծխախոտի արդիւնաբերութիւնը խիստ բարձր եւ կատարելապէս հմտութիւն պահանջող մի արհեստ լինելով, տասնեակ տարիների գործնական փորձառութիւնով միայն կարելի կը լինէր ձեռնամուխ լինել այդ գործին, մի բան, որից դեռ դուրի էր տեղացի երկրագործ ազգաբնակչութիւնը: Այդպիսով ծխախոտի արդիւնաբերութեան ապագայը մնաց ինչ եկեղծներին:

Նոյն իսկ այժմ, տասնեակ տարիներ անցնելուց յետոյ, դուք չէք գտնի մի քանի տեղացի կարուստաւոր կամ գիւղական հասարակութիւն, որ մեծ չափով զբաղվէին այդ գործով: Բացառութիւնները կարելի է մատերի վրա համարել եւ դրանք դարձեալ իրանց գործերում ունեն գրեթէ վարպետ գործակատարներ, առանց որոնց հազիւ թէ մի բան դուրս բերել աղովքի նման:

Ծնորդիւ այդ գրեթէներին խիստ մեծ տարածութեամբ կորչել, տնային վայրեր մաքրվեցան ապարդիւն թիւքիայի եւ նոյնպէս անօգուտ, վայրերի անապատներից: Դրանք բոլորը դարձան մշակութեան համար յարմար, արդիւնաւէտ վայրեր: Նրանք Անյալս ու 10—20 տարի որսնից առաջ իր տիրոջ ոչ մի կօպէկ չափ չէր բերող եւ դեմիտիւնը 10—50 ռուբլով ծախվող կորդերը: Այժմ բարձրացել են առաւելակապ գինների եւ դարձել են իրանց մաքրողների, պիւրիւրի դարձնողների գործի անստապելի մի եւ նոյն այդ 10—50 ռուբլով ծախվող տեղը այժմ վարձով է տրվում դեմիտիւն տարեկան 10—50 ռուբլով...

Վերելում ինչպէս տեղերի մէջ՝ Կուրանի շրջանին պատկանող Բաւապ քաղաքն էլ իր շրջակայ գիւղերով բաւական պանդխտներ ունի իր մէջ, որոնք բացառապէս Տրապիզոնի գիւղերից են անցած այս կողմերը: Սրանք Ռուսիայում տիրող յայտնի գրութեան պատճառով փրկվեցան ապագո հաստատվել են այս կողմերում:

Անպայայի չորակալքի Սէպէպ-Սու, Խոստուրայի, Նիկոլայեւսկի, Բանդուկի, Նաթուրդայի գիւղերի եւ կոմս Լորիս-Մելիքովի սեփականութիւնը եղող Սուկո ընդարձակ կալուածքի սահմաններում բնակվում են 100-ից աւելի տարավազների հայ հողագործներ, որոնց կեանքից մի քանի գծեր տարբեր ցանկութեամբ, ընթերցողին ներկայացնում են այս յօդուածները:

I

Թիւքալ 100 անից աւելի հայերը, իրենց աննշան բացառութեամբ, իրանց արհեստի մէջ բաւական վարպետ եւ խիստ ծրուղան մարդիկ են: Եւ շնորհիւ այդ հանգամանքների, նրանց մէջ, լատի բուն նշանակութեամբ, աղքատ հազիւ թէ գտնելու:

Սակայն ցաւային այն է, որ արանք իրանց օրինակելի ջանասիրութեան հետ չը գիտեն խելացի եղանակով սպառել արհեստը: Դրանք ձեռք բերած արդիւնքները: Եթէ նրանց ջանասիրութեան կողմին ընթանար եւ նպատակաւորաբար սպառուէ՝ այն ժամանակ արանք կարող պիտի լինէին տիրանալու մի պատկառելի դիրքի:

Նախ որ՝ հաւաքական ոյժերով գործելու մասին գաղափար չունենալով՝ արանք առաջին անգամ անձնատուր են լինում գիտել վաճառականին եւ նրան յանձնում են իրանց ամբողջ տարվա աշխատանքի անստապել արանք: Բայց թէ շահագործող, ճարպիկ վաճառականը ինչպէս է գնահատում իրան յանձնված ապրանքը՝ այդ կախված է նրա խղճից...

Օրինակ. զիցուք թէ Յովնանէսը արդիւնաբերել է 2—300 պուդ ծխախոտ եւ պատրաստ է ծախելու: Շատ սպառող չունի: Բայց Բողաշուի ֆիրմայի Անապայի ներկայացուցիչ չը կայաւորուէր ծխախոտ գնող: Սա էլ հազար ու մի նազով հազիւ է համաձայնում 7—8 ռուբլի արժող ծխախոտի պուդը 3—4 ռուբլով գնելու: Այն էլ Աստուած գիտէ, արդեօք խղճի դռնից անցած կշիռով պէտք է կշռէ ներկայացուցիչը...

Մինչդեռ եթէ ծխախոտ արդիւնաբերողներ իրանց մէջ կազմակերպէին մի մարմին, որի հոգսը լինէր արդիւնաբերած ծխախոտի ներկայացուցիչը: Դրանք ծխախոտի գնահատման գործարարներին եւ նրանց հետ գնելի մասին բանակցութեան մէջ մտնելու՝ այդ դէպքում անպայման աւելի լաւ գնով կարելի կը լինէր վաճառել ապրանքը:

Ահա եւ մի ուրիշ օրինակ, որ նոյնպէս ցոյց է տալիս, որ մեր գիւղացին չը գիտէ խելացի կերպով օգտվել իր արդիւնաբերածներից: Անապայի չորակալքից տարեկան մէկ միլիոն պուդից աւելի ցորեն, հաճար, գարի, եւ գիւղացուներն եւ կաւաւաւ է արտահանում: Եւ այդ ամենը մի քանի հայ եւ յոյ վաճառական վաճառականների ձեռքով:

Ինչպէս, հայ, յոյն եւ չէրքէզ գիւղացիք, վերջապէս իր կարիքները բերելով՝ առանց նախօրոք մի սակագին նշանակելու՝ սկսում են արդիւնաբերածները կրել քաղաք: Անապա եւ լցնել յիշեալ վաճառականների ամբարները: Պէտք է ասաւելի, մինչև որ այդ վաճառականներն արտահանման ապագործներից իմանան հաջողաբար իրենց գինը եւ ապա իրանց կողմից գին նշանակելու առաջնությունը: Եւ այդ ապագործների վրա՝ ըստ իրանց խղճի:

Ստորական լուծիւն զատապարտված գիւղացիք միայն ներքուստ մորմողվում են, երբ յետոյ տեսնում են, որ իրանց երեւակայած գնելից շատ պակաս են նշանակել «աղաւթներ»: Աւելին մի սպասել...

Է, ինձօ էնիք, տօ, հէլպէթ զակարանիցի թիւնաբերը պէտքը ֆիլիսթ տալ չեն քի, էօսը էլ մեզի տօ... ԴՅՈ ՅԵ ԲՈՎԱՆԱԿԱՆ ԴԱՐԱՆ: Էլ չի՞նք, սօսալ առնուշի...

Այդպէս է արտահայտում մեր խելօք գիւղացին եւ թող առաջադրեն, որ մեռած գնով տիրանալ իր ճակատի ջրախնային:

Դեռ լաւ, եթէ դու հարուստ ես կամ ազդեցիկ ու մի կերպ կարողանում ես ազդար խաթը չի՞նք եւ մի քիչ մարդավարի գին նշանակել: Եւ մի քիչ մարդավարի գին նշանակել: Միջին եւ օտորին դատակարարի գիւղացիք աղալի խաթին առնելու ոչ մի միջոց չունեն: Բայց աղալից, որ նոյնպէս չէ օգնում... Ի դէպ, հերքել չէ, որ «աղաներն» իրանց քիչի ուղղածի պէս հարուստացում են խեղճ գիւղացուն, նրանց գործակատարներն էլ միւս կողմից ուղղակի եւ անուղղակի միջոցներով հարստացում են իրանց տէրերի թըշուառ զօներին: Դիւրացում 100 պուդ հազիւ 80—90 պուդ է կշռում: Բայց գիւղացին, որ «չի հասկանար» նրանց կշիռ լեզուէն, թող է տալիս, որ գործակատարն իր գողացածով թէ իր եւ թէ աղալի գրպանը լցնէ...

Մ. Տ. Շուտ

ԳԱՆՔԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Բաշ-գիւղ, սեպտեմբերի 6-ին

Օր աւուր հայրենիք վերադարձող գաղթականները տասնեակներով գալիս են Կարսից դէպի այս կողմերը:

Բանեն հայ գիւղերը՝ Բաշ-գիւղ, Արմալու, Գիւլան-Թափ, Ղաթա-Փունդար, Չուրուկ եւ Մթնանա արդէն լցված են գաղթականներով: Իւրաքանչիւր գիւղացի ամեն կերպ աշխատում է ցոյց տալ իր սիրալիր ընդունելութիւնը, զեռ մինչև օրս գիւղացիներից ոչ մէկի կողմից չէ եղած մի փոքրիկ տրոււնը իրանց հիւրերի դէմ:

Սակայն պարզ է, շարունակ չէր կարելի ծան-

րարենել նրանց, պէտք էր մտնել եւ գիւղացու գրութեան մէջ, ուստի եւ հայրենիք վերադարձող գաղթականների անտեսական կարիքները հոգալու համար տեղս եկած մարդիկ որոշեցին գնէ փօքը ինչ այդ ծանուցիւնը թեթեւացնելու համար տալ իւրաքանչիւր գաղթականի համար տասնութը օրեկան 5 կօպ:

Գաղթականները հաւաքվում են այս գիւղերը, իսկ գիւղերն էլ այնքան մեծ չեն, որ ամենքին տեղաւորեն իրանց յարկի տակ անհեռներում, որ եւ գիւղից ստալ ցորի տակ չը մնալու համար լաւ է համարում գաղթականը մտնել եւ գտնել, եւ ախոռներն ու մարագները, իսկ հայ գիւղացու գիտնալով, մութ ու խոնաւ ընտկարանը, որը առանց այն էլ տմեն տեսակ հիւանդութիւնների բուն է, այս դէպքում եւս, ուր ամեն չորս պատով մի ծածկ ունեցող տեղում լցված են 5—6 օտորներ ընտանիքի նոյնքան մարդկանց հետ, պարտաւոր հող է ներկայացնում զանազան հիւանդութիւնների բարձրագոյն ներկայումս գտնէ իմ եղած գիւղերից երկուսում կան 6 բաւական լուրջ հիւանդներ, որոնց առանց բժշկի տեսութեան նոյն իսկ ամենատրտական դեղեր տալն անգամ երկիւղալի է:

Գաղթականների կարիքները հոգացող անձինք տեսնելով որ այլ եւս անկարելի է մնալ առանց բժշկի, դիմեցին Կաղզուանի պ. բժշկ. կապետ Կառնեանին գալու: Այս կողմերը:

Ս. Մնջոյան

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Պատկերազարդ ալբոմներ, հրատարակութիւն իշխ. Մ. Թումանյանի և Ս. Մ. Յուրիւսի:

Մի ժամանակ բաւական բան անում եւ հրատարակվում էր մեր մանուկների ընտանեկան կրթութեան եւ դաստիարակութեան համար, բայց վերջին տարիներ հայ մանուկների մտաւոր եւ բարոյական պահանջները, համարեա, բոլորովին մոռացութեան են մատնված:— մանկական ընթերցանութեան գրքեր շատ քիչ են լույս տեսնում, մանկական պարտէզների թիւը մեր գաւառական քաղաքներում չէ աւելանում, եթէ նոյն իսկ չէ պակասում, իսկ մեր մանուկների համար մի ժամանակ գեղեցիկ վէպիկներ եւ հէքիթներ գրողները վաղաժամ յօգնել են շատ աշխատելուց... Ինչպէս տեսնում էք, մեր փոքրահասակ մանուկների դրութիւնը շատ էլ միայնակ է, մինչդեռ պէտք էր կարծել, որ այժմ աւելի, քան երբ եւ իցէ անհրաժեշտ է ուղե դարձնել մեր մանուկների ընտանեկան կրթութեան վրա եւ այն անձինք, որոնց արտին մօտ է հայ մանուկների ընտանեկան կրթութեան գործը, պէտք է աչքից բաց չը թողնեն այս հանգամանքը:

Հէնց այս հանգամանքն աչքի առաջ ունենալով, մենք աւելի եւս մեծ ուրախութեամբ ողջունում ենք իշխ. Մ. Թումանյանի եւ Ս. Մ. Յուրիւսիների հրատարակած «Պատկերազարդ Ալբոմներ» փակցած փայտեայ խորանարդիկների վրա: Այն, ինչ որ վաղուց արել են օտար ազգերը իրանց մանուկների համար, այժմ արված է եւ մեր մանուկների համար, եւ պէտք է խոստովանել, որ արված է վայելուչ կերպով, — ճաշակով եւ հմտութեամբ:

Աւելորդ է խօսել, թէ որքան օգտակար է փայտեայ խորանարդիկների վրա փակցած «Պատկերազարդ Ալբոմները».— դպրոցական կրթութիւնից առաջ երեխան այդ զուարճալի, ուրախ եւ հեշտ միջոցով սովորում է իր մայրենի լեզուի այբուբենը, մի բան, որի համար այնքան աշխատանք են գործ գնում դպրոցներում:

«Պատկերազարդ Ալբոմներ» մի գեղեցիկ պարգեւ է մեր մանուկներին: Խորհուրդ ենք տալիս մեր ընտանիքներին գնել եւ ուրախացնել իրանց երեխաներին այդ «Ալբոմներ»-ը: Գինը—1 ռ. 50 կօպէկ է փայտեայ խորանարդիկների վրա, եւ 1 ռուբլի կարգօնի վրա:

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սեպտեմբերի 7-ին

Գնալով քաղաքային ընտրութիւնների խնդիրը գտնուում է հետաքրքրական եւ մաքուր գրադեցնող Ջրաղլիւմ եւ այդ հարցով անկեղծ ցանկութիւնների տէր մարդիկ, քաղաքի շահը որոնողներ, զբաղված են նաեւ այնպիսիները, որոնք այսպէս կամ այնպէս անձնական հաշիւների ասպարէզ են ուզում դարձնել հասարակական այդ գործը: Հէնց այդ պատճառով էլ խնդիրը պտտվում է ներկայ քաղաքագլխի շուրջը:

Մի հասարակութիւն, որը չը գիտէ իրան չորհրդած լայն իրաւունքներից օգտվել, որը ընդունակ չէ անձնական ու մասնաւորը ընդհանուրի շահերից տարբերել, կրնայ սխալմամբ ներքին թիւերի մեջ, նա կառավարողի մասնաւոր նեղ հաշիւներով, ինչպէս այդ մենք այժմ տեսնում ենք մեզանում: Մի կողմն են դրել ըստ խնդրի, իսկական գործը եւ գտնում են անձնաւորութիւնը:

Կան մարդիկ, որոնք միամիտ կերպով քաղաքային ինքնավարութիւն առելով հասկանում են քաղաքագլխի անձնաւորութիւնը, կան եւ մարդիկ, որոնք այսպէս կամ այնպէս անձնական հաշիւներ ունենալով՝ օգտվում են այդ հարցով մասնաւոր մարդկանց տարրիկական տրամաբանութիւնից, քաղաքային գործունէութեան բացասական կողմերը կապելով քաղաքագլխի անձինքն եւ դրական գործերի վերաբերմամբ փակելով իրանց աչքերը:

Քաղաքագլխի դէմ լինում են եւսանդուն ջանքեր, նրա դէմ գործում են շատերը:—Ինչո՞ւ, որ թերութիւնների համար, փաստեր չը կան: Փաստը թեր հասկացողութիւնն է, մանր հաշիւները:

Այս բանը պարզաբանելու համար մի փոքր առաջ դնանք եւ մի անկարկ գցենք քաղաքային ինքնավարութեան ներկայ կազմի գործունէութեան վրա, որի հետ չաղկապված է քաղաքագլխի անձնաւորութիւնը:

Գալիս ենք մի աւելորդ անգամ նորից կրկնելու, որ քաղաքային ներկայացուցիչների ներկայ կազմը ընդհանուր առմամբ աւելի բարձր է, քան նախորդները: Մինչդեռ առաջ քաղաքային դուռնի նստարանների պէս բացած էին եգիպտական մոմիաների պէս անչարժ աղաները եւ հաջիւնները, այժման կազմը աչքի է ընկնում իր կենդանութեամբ, նա վնաս մի չարք խնդիրներ, որոնք մեր քաղաքի համար ունենին կարեւոր նշանակութիւն: Դրանց թոււում առաջին տեղը բռնում է ջրի հարցը: Մեզ համար կենսական այդ խնդիրը, որ քան տարվայ պատմութիւն ունենալով եւ բաւական աղմկալի ժողովներից ու վիճաբանութիւններից յետոյ հազու լուծումն ստացաւ այժմ գլոմփում է պաշտօնական բարձր չղաններում վերջնական հաւանութիւն գտնելու համար: Երկրորդ տեղը բռնում է այսպէս անուանված զգալի վատնների հարցը, քաղաքապետական բազմաթիւ հողաբաժիններ տարիների ընթացքում մասնաւոր անհատների սեփականութիւն են դարձել: Նախկին վարչութիւնները, զանազան խնամական եւ բարեկամական կապերով կապված, չեն ուզեցել ոչ մէկի խաթման գիպել, այն ինչ ներկայ վարչութիւնը իր գործունէութեան առաջին օրերից սկսել է այդպիսի յափշտակութիւնների դէմ 116 դատ, որոնք մասամբ վճռված, մասամբ մերժված եւ մասամբ էլ գործվում են դատավարական ընթացքի մէջ: Երրորդ տեղը բռնում է քաղաքի անտեսական դրութիւնը: Ամենքին յայտնի է, որ քաղաքը ամբողջ 7—8 տարի չէր կարողանում վճարել 1892 թ. խօշորայի դէմ կուսելու պատճառով արած 18—20,000 ռուբլի պարտքը: Այն ինչ ներկայ վարչութիւնը ոչ միայն այդ պարտքը վճարեց, այլ եւ անտեսեց 25,000 ռուբլու չափ մի գումար, որը վճարած պարտքի հետ միասին կազմում է մի խոշոր թիւ, ի նկատի ունենալով 100,000 ռ. ոչ աւել բեւոյժ ունեցող մեր քաղաքի պէս քաղաքը:

Բացի վերը յիշածներից, վճովել եւ արդէն կառուցվում է քաղաքի համար յատուկ սպանդանոց, որտեղ լինելու է մասնու կենդանիների վրա բժշկական հակողութիւն, բացվել են քաղաքում նոր-նոր փողոցներ, մաքրվել են քաղաքային հրապարակի առասպելական այլանդակութիւնները, վճոված է քաղաքային ընթերցարանի հարցը, բացվելու է քաղաքային երկդասեան մի դպրոց եւ վերջապէս իրականացնելու է այդքործական դպրոցը, որի կարիքը մեր քաղաքի համար շատ մեծ է:

Որ քաղաքագլուխը իր շիտակ եւ մաքուր ցանկութիւններով ու եռանդուն գործունէութեամբ

թեամբ իւրաքանչիւր խնդիր առաջ է մղել լաւ ուսումնասիրելուց եւ խոր համոզմունք կազմելուց ու խորհրդին համոզելուց յետոյ, երբեմն միայնակ փրկելով որ եւ է կարեւոր հարց, որպիսին ջրանցքն է, անխուսափելի տապալումից, այս կը խոտովանեն շատ շատերը: Եւ այսպէս չը նայած այս բոլորին, պէտք է խոտովանած, որ առանց լաւ կազմի մի քաղաքագլուխ միայնակ ոչինչ չէր կարող անել: Այս պարզ է ամենքի համար: Բայց թէ ինչու պարզ չէ ամենքին, որ որ եւ է բացասական գործունէութիւն չը պէտք է վերաբերել լոկ քաղաքագլխին, այդ արդէն նեղ հաշիւներով առաջնորդող մարդկանց գործ է:

Մի թոյլ կողմ, որը խիստ աչքի է ընկնում քաղաքային ինքնավարութեան գործունէութեան մէջ, այդ այն անտարբեր վերաբերմունքն է, որով նա վերաբերվում է դէպի շուկան ընդհանրապէս եւ դէպի հացի ու մսի տակսան ու նրա կանոնաւոր վաճառումը մասնաւորապէս մեզ համար: Ինչո՞ւ, որ մեծ ցաւ է մեր քաղաքի համար, որ ոչ մի կերպ կարգի տակ չեն չէ աղբղում, ճիշտն ասած, որովհետեւ ջանք չէ գործ դնում նա: Տակաւայից աւել վաճառել, մթերքների յատկութիւնը սաստիկ վատացնել եւ կամ թէ չէ «բացարձակ» անել, քաղաքը մասնակ սովի ու իրարանցումն առաջ բերել, սրանք այն զէնքերն են, որոնցով արդէն մասագործ եւ հացափառ մայրաքիները կարողացել են քաղաքային վարիչների, ինչպէս ասում են, ատամները համարել եւ իրանց ցանկացած տակսան նշանակել տալ: Սրա պատճառով էլ այժմ, այս առատութեան եւ այս է-թան գների միջոցին, հացի խորը ծախում է 28 կ. եւ մսի ֆունտը 7 1/2 կ., համարեա մի անհաշիւ գին ցորենի գին համեմատութեամբ: Եթէ այս բանի մէջ քաղաքագլուխը յանցանք ունի, միթէ ազատ են վարչութեան անդամները, կամ 40—50 ձայնաւորները: Միթէ իւրաքանչիւր ձայնաւոր ինքն համոզված չէր անհանգիստ կարգի լինելու մէջ, կամ միթէ տոթիթ չէ եղել դրսում լսելու արտօններ հացի եւ մսի յատկութեան եւ գների շատ թանկութեան մասին: Քաղաքագլուխը, վարչութիւնը թոյլ էին այդ հարցում, բայց միթէ ամբողջ ընթացքում որ եւ է ձայնաւոր իր համար պարտք չէր համարում բարձրացնելու կենսական մթերքների մասին հարցը: Պահանջը լաւ է, բայց գործելը դժուար: Մենք գիտենք դէպքեր, երբ ձայնաւորներից անհատներ, լաւ յարաբերութիւններ պահպանելով մագործի կամ հացափառների հետ, դուռնալու հարց եղած դէպքում պաշտպանում էին նրանց շահերը: Ի հարկէ այդ պաշտպանութիւնները բացարձակ կերպով չէին կատարվում, այլ կողմնակի խորհուրդներ տալու եւ շարժվելու եղանակը սովորեցնելու միջոցով: Կային անհատներ, որոնք քաղաքագլխին վնասելու մտքով չէին քայլում հրապարակներում բացարձակ յարձակվել նրա դէմ, տակաւայի եւ մթերքների անկանոնութիւնը վերաբերելով նրան: Հաւանաբար միամիտ ժողովուրդը, որ քաղաքային ինքնավարութիւն առելով հասկանում է միմիայն քաղաքագլուխ, շատ հեշտութեամբ ընկաւ այդ դիտաւորեալ չարախօսողների աղբեցութեան տակ՝ նրանց բերանից վերջնելով եւ անհնդաւոր կրկնելով ու տարածելով, որ քաղաքագլուխը թոյլ է, մթերքներն ու առկայի վրա ուշ չէր դարձնում:

Այս հարցում մենք չենք ուզում արդար համարել քաղաքագլխին, բայց եւ չենք կարող այնպիսի մեղքը նրան վերագրել: Ինչպե՞ս էին ամբողջ դուռնալ, քաղաքի առաջաւոր 50 ձայնաւորները եւ միթէ բարեխաղութիւն է քաղաքագլխի առաւելութիւնների եւ նրա անկեղծ, շիտակ ու մաքուր գործունէութեան առաջ աչքեր փակելով՝ օգտվել ժողովրդի միամիտ հասկացողութիւնից, անձնական հաշիւ առաջ առնել մի այլ պակասութեան անունից:

Եւ գիտէք անձնական հաշիւներով առաջնորդողների ինչ մեծ խռմբ կայ կազմված այժմ: Քաղաքագլխի դէմ գործում են այժմ մի կարգի մարդիկ, որոնք չը կարողացան չափաւոր գործեր ձեռք բերել, յոյս դնելով բարեխաղութեան վրա, գործում են այնպիսիները, որոնք եւս չէ չղված: Գործում են եւ այնպիսիները, որոնք հակառակ էին ջրանցքին, աշխատելով ջրանցքը չինել քաղաքի միջոցներով, որպէս զի իրանք այս կամ այն գործը վերցնեն եւ չափեն: Մի խօսքով քաղաքագլուխը իր շիտակ բնաւորութեամբ, իր մարակող լեզուով չափեց շատ թշնամիներ, որոնք այսօր չեն խնայում ոչ մի ջանք նրան վնասելու: Կան մարդիկ, որոնք աշխատում են քաղաքագլուխ լինել, կան եւ այնպիսիները, որոնք աշխատում են նախկին երկուսի քաղաքագլուխների

համար: Ինչ կը լինի հետեւանքը, յայտնի չէ: Կարող է պատահել, որ ներկայ քաղաքագլուխը չընտրվի կամ նոյն իսկ ինքը հրաժարվի, միայն այսօրվանից մենք նախատեսում ենք որ կանցնի մի երկու ամիս եւ զղջումն կատարեալ կը լինի, խօսքս նրա թշնամիների մասին չէ, այլ այն ժողովրդի, որի համար դուռնայի այս կազմի օրով շատ բան է արված, մի երկու օկոսած գործեր ի կատար ածելու համար հարկաւոր է նոյն շիտակութիւնն ու անկեղծութիւնը:

Ամիս 22 ին տեղի են ունենալու ձայնաւորների ընտրութիւնները: Մեզ ընտրող հասարակութեան առաջ ենք դնում այս խնդիրը իր բարդ կողմերով, թող նրանք չըջանայեաց լինեն եւ մի անգամ էլ հաշիւ առնեն այն անունները, որոնք կան այժմ հրապարակի վրա եւ ըստ այնմ տան իրանց ըսէն այս կամ այն անձին:

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, սեպտեմբերի 9-ին

Հայրենիք վերադարձող թիւրքահայ գաղթականների օգտին շարահայրութեամբ ստացանք 1) Մօսկվայից, պ. Աւետիս Պողոսեանից հեռագրով 240 ռուբլի, 2) ներկայ սեպտեմբերի 1-ին քաղաքում գաղթականների օգտին կապացած երեկոյթից՝ 150 ռ., 3) Բազուից պ. Տիգրան Փաթարեանի միջոցով 7 ռ. եւ 4) Սարիկամիշից, պ. Բ. Թիւրքեանի միջոցով 75 ռ. չը հաշուելով տեղումը գաղթականների վրա գործադրած՝ 47 ռ. 75 կօպէկը եւ ճանապարհներին նրանց կարիքները հոգացող պ. Լ. Գիւլումեանին յանձնած 30 ռուբլին:

Նախկին գումարների հետ, մինչեւ այսօր ստացել ենք 2595 ռ. 62 կ., տեղումն ծախսել ենք 184 ռ. 84 կ., եւ սահմանի վրա գտնվող գաղթականների կարիքները հոգալու համար չորս նուագում փոխադրել ենք 900 ռ. ընդամենը ծախսել եւ փոխադրել ենք—1084 ռ. 84 կ., առձեռն կալ 1410 ռ. 78 կօպէկ:

Կարսի վիճակի փոխանորդ Կիրեղ վարդապետ

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 4-ին

Պ. Խ. Տէր-Մարգարեանի հետաքրքրութիւնը գտնաւորելու համար եւ կրկնում եւս դրականապէս եւ հաստատապէս, որ չորեք ձեռք բերելու համար ոչ մի գումար չէ գործադրվել, մի եւ նոյն ժամանակ առաջարկում ենք նրան նախքան փ դիմաք ժողովրդական թատրոնի հայկական բանին անդամներին՝ նախկինը գրելու, նախ ժողով գումարել եւ նախազանից իմանալ, թէ արդեօք ժողովրդական թատրոնի համար չորեք ձեռք բերելու նուրբ եղել է, ունի, երբ եւ ինչու չէ գործադրվել, այն ժամանակ նա, ի հարկէ, կրմաբար այն ինչ մեղ ասել է նոյն նախազանքը: Երբ պարոնը այսպէս վարվել՝ փոխանակ մեր գրածը զրգարաւորութիւն անուանելու, գուցէ ինքը եւս մեզ հետ հաշիւ պահանջէր: Նուրբ եղել է այն ժամանակ, երբ ժողովրդական թատրոնը նամակագիր պարոնի գումարին անգամ չը գիտէր:

Այսքանը առ այժմ բուն խնդրի մասին: Գտնվում մեր ամեն միայն նկատողութիւններին ընթացքում պատասխանելուն (մեր Ենկատողութիւնները, ինչպէս գիտեն ընթերցողները, միշտ «փոքրիկ» են եղել)՝ աւելորդ չենք համարում գրելու, որ կատարեալ լուծութիւն պահեցիք, երբ արձանագրվեց («Մշակ» 1901 թ. № 224) սէկցիայի անդամների կողմից թոյլ տուած խայտառակ դէպքը: Մանապէս լուծութեամբ կլանեցիք, որ ուսաց սէկցիայի մի կին անգամ ժողովրդական ընթերցանութեան կոմիտեայի հերթական ժողովում, երբ դուք հրաւիրում էիք նրան ներկայ լինելու հայոց ներկայացուցիչ, ստորագրով լայնեց, որ նա ցանկութիւն չունի կամովին իրան փորձանքի եւ վտանգի ենթարկելու (ծեծելու մտքով), ձեռ լուծութիւնը եւ գործերը ոչ թէ թատրոնի գործը իր բարձրութեան վրա պահեց, ինչպէս յաւակնութիւն ունէր՝ կարծելու, այլ մի սեւ բիծ վատասկեցին ժողովրդական թատրոնը եւ հայկական սէկցիան:

Եթէ նոյն իսկ նկատողութիւնները շատ «խոշոր» լինէին, պէտք է պատասխանելիք փաստերով եւ ձեռ կատարած գործերով, իսկ թէ այդպիսիները ոչինչ ողորմելի էին անցեալ սէկցիան—կարծում ենք, թէ դուք չը պէտք է մեզանից իմանաք, այլ ձեռ տեղեկագրեց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Երեւանցի, սեպտեմբերի 10-ին, Թիֆլիս հասու: Կուրսից կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ Յրեզէ:

Մեզ հաղորդում են, որ վերջին օրերն մի քանի տասնեակ թիւրքահայ գաղթականներ,

որոշելով մնալ մեր երկրում, ընդունեցին ուսանալատակութիւն, գրվելով Թիֆլիս քաղաքի մէջ: Գների դասակարգի մէջ:

Երկրագործութեան եւ պետական կայտաւորների միմիայն Երմօլով, որ այժմ գտնվում է հիւսիսային Կովկասում, Թիֆլիս կը հասնէ սեպտեմբերի 26-ին:

Ներկայումս Թիֆլիսում է գտնվում պետական խորհրդի անդամ, սենատոր բարոն Փոն Իսկուլ-Գրիգորեանը: Բարոնը երեւաթի, սեպտեմբերի 6-ին, Թիֆլիսի նահանգապետ Սվեյգինի հետ միասին այցելեց կոյրերի ուսումնարանը, աշխատանքի տունը եւ արտերայնների որդոց ապաստարանը:

Վաղը, ուրբաթ, սեպտեմբերի 13-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում տեղի կունենայ ընկերութեան անդամների խորհրդակցութիւն: Կերթական գիւղատնտեսական այն կարիքները մասին, որոնց կարելի կը լինէր առաջարկել երկրագործութեան միմիայն բարեհայեցողութեանը, երբ նա այցելէ Թիֆլիսը:

Երեւանցի, սեպտեմբերի 10-ին, վերջացած Թիֆլիսի նահանգի անտառապետների համաժողովի պարագմունքները: Համաժողովում, ի միջի այլոց, ընկեցին պետական անտառներում ձեռն ժամանակ անասուններ արածացնելու, գիւղական ազգաբնակչութեան պետական անտառներից ձրիաբար փայտ տալու եւ անաստապետութիւնների մէջ պտղատու ծառերի անկարաններ հիմնելու հարցերը:

Ռուսաց լրագրիները հաղորդում են, որ գիտու արքունի մեծալմաճառ Անդրկովկասում կը մտցնվի 1905 թ.ականից:

Վերջին չորս օրերը Թիֆլիսում օդը զգալի կերպով ցրտել է: Երբեմն գալիս է ամպեր, բայց դեռ չէ սկսվել աշնանային երկարատեւ անձրեւների շրջանը:

«Վերիա» լրագիրը հաղորդում է, թէ մօտ օրերումս վերադարձել է Սինայի վանքից պ. Զավախիվիլի, որը արթիւնոր Մարրի հետ միասին պտրապում էր այնտեղ վրացերէն ձեռագիրների ըննութեամբ: Այդ պարագմունքները տեւեցին երեք ամիս: Զեռագիրները նրանք գտել են մօտ 180 հատ, որոնց թոււում կան շատ հետաքրքրականներ՝ գրված մագաղաթի վրա: Զեռագիրների ցանկը կը տպագրվի այս տարի առանձին գրքով, որ կունենայ իր մէջ նկարներ՝ հանված հետաքրքրական ձեռագիրներից: Պրօֆէսօր Մարր ուղեւորվել է մի բանի շարքով Երուսաղէմ:

Ժողովրդական լուսաւորութեան միմիայնութիւնը բացատրեց, թէ ժողովրդական ժողկալութեան հոգաբարձութիւնները իրաւունք ունեն, առանց թոյլաւորութիւն խնդրելու ժողովրդական ուսումնարանների գիւրեկաններից սարքել հրապարակական դաստիարակութեան պահպանութեան:

Բժշկական դէպարտամէնտում հարց է յարուցված վերաքննելու այն օրէնքները, որոնք վերաբերում են պետութեան սանիտարական մասին եւ ժողովրդական առողջապահութեան պահպանութեան:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 5-ին Խաւհակ Ժամարեանը գիւրեւայ 11 ժամին դառնում էր տուն հասարակաց ժողովարանից: Նրան ուղեկցում էր ծառան լուսաւորով: Տան առաջ նրանց մօտենում է մի մարդ հետեւեալ հարցով. «Դուք էք պ. Ժամարեան» եւ դեռ պատասխանը չտուած՝ սուլում է. իսկոյն, կարծես գետնի տակից, բուսնում են ետք հօգի, որոնցից երեքը ծառային են չղապատուում, իսկ չորսը ժամարեանին են դէպի սարը տանում: զգուշացնելով, որ դիմադրութեան դէպքում նրանց իսկոյն կը մեռնեն: Սարի գլխից պ. Ժամարեանին բերում են Ուլարի բէկի՝ բնակիչներից թափուր տանը, բոլոր ունեցածը՝ ժամացոյցը, մատանին եւ 600 ռուբլուց աւելի գրած խլում նրանից, յետոյ առաջարկում են ստորագրել մի մուրհակ երեսուն հազար ռուբլու ի հարկէ, Ժամարեանը անտրուճ զոտրաբերում է. այնուհետեւ ընթերցել են նաւում եւ առաջարկում են, որ Ժամարեանը հետեւեալ օրը երեսուն հազար ռուբլին բերէ Բոխրաւալ բերքի մի թիփ տակ դնէ, որտեղ կը գտնէ իր ստորագրած մուրհակը: Վերջապէս գիւրեւայ

Թափան հաշիւը երեւում է, որ համարեա առանց բացառութեան բամբակի բոլոր գործունեւրը բացվեցին: Նուանդուն կերպով սկսել են հունձը. մի քանի տեղերում նա աւարտված է: Անձրեւները նշանաւոր քնաս են հասցնում բամբակի բացված գործունեւրին, բայց մեծ օգուտ առեցին բամբակի ուշ ցանած բոյներին:

Պէշիւրիական փոխարքայ Իւանչիկայ եւ չէնգեան նահանգապետ Էրնգ նշանակված են կառավարութեան ներկայացուցիչներ Շանդհայըւան—Իրիւան երկաթուղու ընդունելութեան ժամանակ:

ԽԱԲԿՈՎ, Սեպտեմբերի 16-ից Վալիկում նշանակված են 15 գործեր այն անկարգութիւնների մասին, որ կատարեցին Վոլոգդի գաւառում գիւղացիները գարնանը, այն է կողոպտեցին կալուածատէրերի գոյքերը: Գործերի առաջին շարքի ընտելեան ժամանակ կը նախագահէ Խարկովի պալատի աւագ նոխագահը եւ քչական ղեկարարման նախագահը: Այդ շարքի վկաներ կանչված են 300 մարդիկ:

ԻՆԴԻԱՆՈՊՈԼԻՍ, Բուզվէլտի քարտուղարի տուած տեղեկութեան համաձայն, ձախ ոտի ծնկից ներքեւ սաստիկ ջարդվելու պատճառով, Պիտտիլլում տեղի ունեցած գոյաղդ ղեկավար պատճառով, նախագահի ոտի վրա փոքր վէրք գոյացաւ: Բժիշկները յայտնում են, որ թէպէտ իրանը ոչինչ լուրջ բան չեն գտնում եւ որ եւ վտանգ չեն տեսնում, սակայն, այնու ամենայնիւ, զգուշութեան համար, վնասցին անյապաղ օպերացիա անել Ինդիանոպոլիսում: Նախագահը դադարեցրեց ճանապարհորդութիւնը եւ վերադարձաւ Վաշինգտոն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Սեպտեմբերի 10-ին պետական բանկում Բոլշարայի Կինգ պորցէնտական ոսկէ փոխառութեան ստորագրութիւնը առեց 1,688,750 ռուբլի:

Տիրած ընկած սէրիաների համարները: Ամէս մի հետեւեալ սէրիա բովանդակում է իր մէջ 50 տոմս, № 1-ից մինչեւ № 50, պարփակեալ:

00042	03169	05866	09004	13077	17067
00185	03235	05957	09109	13108	17093
00189	03344	05986	09238	13203	17379
00276	03380	06121	09246	13210	17476
00297	03529	06123	09264	13281	17489
00385	03531	06155	09265	13318	17589
00456	06581	06327	09368	13335	17591
00518	03595	06335	09582	13372	17690
00575	03648	06537	09719	13508	17696
00812	03699	06577	09737	13539	17835
00899	03761	06590	09760	13560	17839
00991	03777	06753	09778	13633	17845
01009	03822	06795	09783	13928	17906
01247	03868	06805	10202	14006	17960
01301	03919	06833	10271	14023	18004
01350	03925	06838	10540	14306	18040
01445	03985	06938	10489	14426	18086
01487	04087	06972	10661	14527	18117
01540	04159	07031	10673	14544	18241
01825	04243	07198	10837	14562	18257
01836	04277	07309	10913	14773	18345
01882	04340	07432	11049	15005	18456
02054	04377	07480	11227	15236	18513
02056	04431	07555	11577	15282	18535
02060	04467	07750	11688	15336	18582
02155	04727	07812	11757	15351	19080
02160	04826	07827	11788	15557	19119
02208	04831	07839	11829	15625	19280
02324	04833	07933	11854	15633	19399
02377	04845	07946	12068	15791	19411
02391	04874	08081	12124	16002	19435
02450	05062	08222	12218	16042	19445
02574	05074	08380	12522	16166	19741
02652	05129	08402	12582	16387	19885
02675	05196	08519	12692	16510	19914
02730	05244	08535	12708	16547	19964
02792	05413	08556	12821	16589	
02878	05547	08714	12831	16849	
03032	05558	08796	12848	16909	
03140	05842	08976	12886	16936	

Խմբագիր ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ԳԵՈՐԳ ԹԱԴԵՈՍԵԱՆ
վերադարձել է եւ սկսել հիւանդների ընդունելութիւնը, առաւօտեան 9—11 ժամ, երեկոյեան 6—7 ժ. Վէլիամինովսկայա փողոց, տ. 24:
(հ. շ. ե.) 3—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, սեպտեմբերի 15-ին
Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը
սեպտեմբերի 15-ին ընկերայացնէ

Պ Ա Տ Ի Ի
Կոմիտաս 4 գործող. հեղինակ. Յովհաննիս, Թարգմ.
Ա. Թարխանեանի:

ԳԻՇԵՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ Է
Վոլոգդի 1 գործ. հեղ. Սունդուկեանի
Մանուկացում են.—Տ.տ. Գուրգենեան եւ Մելի-
քեան, պ.պ. Մամիկոնեան, Միրզոյեան եւ
Տէր-Դաւթեան:
Սկզբն է 8 ժամին երեկոյեան:
Տեղերի գները՝ պարտէր—3 ռ. 30 կոպէկից
մինչեւ 1 ռուբլի, լիտէր—12 ռ., օթեակներ—
բէնուար՝ 7 ռ., բէնուար՝ 6 ռ., բալիօն՝ 1 կարգ—
1 ռ., 2 կարգ—80 կոպէկ, զաւերէիս—35
կոպէկ եւ նրա օթեակը—4 ռ.:
1—2 Բեմխօսք՝ Յ. Արեւիկեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի
Շուշի քաղաքի Ագուլեաց եկեղեցու հա-
մար, ինչպէս յայտարարել եմ, հարկաւոր է
Մ Ի Ք Ա Ն Ա Ն Ա Ն Ա Ն Ա Ն
Ցանկացողները կարող են դիմել ինձ, ոչ ուշ,
քան մինչեւ ներկայ սեպտեմբերի 25-ը, հետե-
ւեալ հասցեով: Шуша, ктитору Хачатуру
Хачатуряну. 1—6

ԲԺԻՇԿ ՄՈՒԼԻՆ
Ընդունում է ամեն օր կրկնողի, քթի եւ ա-
կանջի հիւանդութիւններ ունեցողներին, ժամը
11—1 առաւօտեան եւ ժամը 4—6-ը երե-
կոյեան: Սուղեքայեա փողոց, № 30:
1—14

ԻՇԽ. Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԱՋԻՆ
ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՐԶԵՍԱՆՈՑՈՒՄ
Ընդունվում են աշակերտուհիներ 10 տարեկան
հասակից: Պայմանների մասին կարելի է տեղե-
կանալ արհեստանոցի կառավարուհու տ. Մ.
Ավագեանի մօտ: (Բարեաւանսկայա № 10):
Ընդունվում են նաեւ պատուէրներ ամեն տե-
ւակից: (հ. հ. կ.) 2—3

Դ Պ Ր Ո Ց
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ՄԱԿԱՆՑ ՀԱՄԱՐ
Ընդունելութիւն՝ պատրաստականի բոլոր
բաժանմունքները եւ I ու II դասարանները:
Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 6-ին: Բէհրու-
թեան փողոց, սեփական տուն, № 29.
(3, 5, 6, 8, 12, 16) 4—6

Ա Տ Ա Մ Ի Ա Ր Ո Ց
ՕՐ. Ս. ՇԵՐՄԱՆՔԱՆԵԱՆ
Վերադառնալով ամառանոցից՝ շարունակում
է հիւանդների ընդունելութիւնը:
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
(հ. կ.) 6—105

ՎԻՃԱԿԻՍ քարճարպաւոր փոխանորդի պա-
տուէրի համաձայն, Կարա քաղաքի հայոց ա.
նշան եկեղեցու միաբան հանգուցեալ Յակովբ
աւագ քահանայի պ.պ. միեքը, առաջիկայ կի-
րակի, ամսիս 15-ին, առաւօտեան ժամը 12-ին,
երրորդ եւ վերջին անգամ հրաւիրվում են քա-
ղաքիս յաջորդարանի դահլիճը ժողովի, իրանց
համար նոր քահանայացուի ընտրութիւն կա-
տարելու:
Երէցփոխ՝ Մանուկ Աբրահամեան
2—3

Ստացված են 2 Իււնդի
ՀՈՉԱԿԱՆՈՐ ՀԱՎԱՐԿԱՐՈՒՄՆԵՐ
Ֆ Ի Լ Տ Ր Ն Ե Ր Ը
The cheavin's mikrobe proof Filters.
Այդ ֆիլտրները բացի ջուրը մաքրելուց զա-
նազան ոչ օրգանական խառնուրդներից, ոչ ն-
շացնում է նաեւ անպայման բոլոր
փափակար միկրօբները, այնպէս որ
միջոցներից մէկը կարելի է համարել զանա-
զան տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:
Ցուցակները ուղարկվում են ըստ պահանջ-
ման: Պ.Պ. Վաճառականներին առանձին գներ
Գլխաւոր ներկայացուցիչն է Կովկասի հա-
մար Իսաակ Իմրա Աვაքով, Բաքու.
5—5

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՐԽԱՐԴԻՆԱՐԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Վարչութիւնը

Սրանով պատիւ ունի հրաւիրելու պ.պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի,
որը կայանալու է ներկայ սեպտեմբերի 25-ին, չորեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 8-ին, Վա-
րչութեան գրասենեակում, որը գտնվում է Սերգիեվսկայա փողոցում, Փրիզօնով տանը:
Զբաղմունքի առարկան են:
Գնութիւնը լեռնային ղեկարարմանից ստացված յայտարարութեան, որը վերաբերում է
Ընկերութեան Վարչութեան խնդրամատոյց ինքնուրու, փոխելու բաժնեկցարի, Ընկերութեան
հանձնելի—Բիրի-Էլբաթի № 54 հողաբաժնից ստացված նաւթի պուլսովաւոր:
Նթէ ժողովը, սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատկառով, չէ կա-
յանայ, երկրորդ անգամ նշանակվում է կրկին նոյն տեղը, ամսիս 28-ին, շաբաթ օրը, երեկո-
յեան ժամը 8-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չափելով ձայների քանակութիւնը
(§ 29):
Պ.պ. բաժնետէրերը, որոնք կը ցանկանան ծանօթանալ վերոյիշեալ լեռնային ղեկարարման
յայտարարութեան հետ, թող բարեհաճեն դիմել Ընկերութեան գրասենեակը ցերեկվայ ժամը
10-ից մինչեւ 2—ը:
(12, 20 եւ 24) 1—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, սեպտեմբերի 15-ից, կը նկարեն
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ
Խմբի անդամներ են.—Տ.տ. Սրաքեան, Գուրգենեան, Չաբէլ, Մայսուրեան, Մելիքեան եւ
ուրիշներ: Պ.պ.Արեւիկեան, Աղայեան, Արաքեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Յարութիւնեան,
Պետրոսեան, Վանչիւր, Տէր-Դաւթեան եւ ուրիշներ:
Յուշարար—պ. Չարաբեան
Սցենարիւս—պ. Ամիրեան
Բեմադրութեան է.—«Պատիւ», «Էլի մէկ զոհ», «Փրիզիէն», «Արքայ Լիր», «Օտարներ», «Օ-
թէլլո», «Վեյդաբնիկ», «Բիւն», «Ապահարանի ծաղիկներ», «Ժօթ Դանդէն», «Անսանձի անձա-
հարումը», «Վկայների արարքը» եւ այլն: Բացի դրանից, առաջին անգամ կը ներկայացվեն—
«Ունէր իրաւունք» (պ. Շիրվանզադէի նոր պիւսան), «Նորաբացված Չանգալի», «Մի քոպէ
հանգստութիւն չունենալ», Իրաւագուրը», «Բարեկամներ», «Տնտեսաւոր», «Սողոմոն կործանուել»,
Սիրելու իրաւունքը», «Շօրա», «Շէլլո», «Պուրէր փեսան», «Վանիլիների գաւակները», «Սմեա
—Վանիա» (պ. Մետերլինկի նոր պիւսան) եւ այլն:
Ներկայացուցիչներ սկսվելու են ճիշդ 8 ժամին: Տեղերի գները սովորական են:
1—1 Բեմխօսք Յ. Արեւիկեան

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. վաճառականներին, որոնք կը կամենային գործ ունենալ
Վ Ա Ր Շ Ա Վ Ա Յ Ի հետ, որ եւ վաղուց արդէն վերաբնակված լինելով Վարչապետութեան,
յանն եմ առնում եւ կատարում եմ ամենայն տեսակ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Եւ իմ բաղմունայ համութեամբ առեւտրական ապարդիւն օգտաւէտ կարող եմ լինել ինձ
դիմող վաճառականներին, որոնց խնդրում եմ դիմել ինձ հետեւեալ հասցեով:
ВАРШАВА, Медовая 17, кв. 33. Минасу Яргудову. (հ. հ.) 17—50

„Փ. Ն. Փ Ր Ի Դ Օ Ն Ե Ա Ն“
ԿՈՆՖԵՏԻ ԵՒ ՇՈԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցանիշներում մեր պատրաստած սպրիտները առաջնայն-
նայնաբար կոնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵՇ ԱՐԾԱԹԵԱՆ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ԻՍՀԱՐ-ԼՈՅՈՒՆ, Կարամէլ ՎԻԻԼԻԵՐ-ՍԱՆԱ եւ աւա-
րակ բարձր յատկութեան կարամէլներ մրցեցնելով:
Գործարարում աշխատում են մարաքաղաքի նշանաւոր վարպետներ:
Պատեւէրներով դիմել. Թիֆլիս, Պալմովսկայա փողոց, սեփական տուն
Գործարարի հեռախօս № 362, գործարանական խանութներ № 772:
66—100 (հ. հ.)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
Լ Ա Բ Օ Ր Ա Տ Օ Ր Ի Ա
Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ
ԴՕԿՏՐ ԳԻՄՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Գիմական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային
լիւր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ:
Դիմել՝ Тифлисть, Кавказская Центральная Лаборатория Доктора химия Г. Пастер-
маджиянъ, Вельяминовская ул., д. Лористъ-Меликова, № 19. 3—26

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒՄՈՎՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՑՍ ԱՐԱՆՍՄԵԱՆԻ
Հեղինակ ԱՆԵԼԱՐԱՆԿԱՆ, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահու-
թեան ձեռնարկի, որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ըն-
դունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ
Երկու օր անձանց՝ գործնական ձեռով հաշւապահութիւն 4 ամսում, պատաս-
խատուութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով
ՊԱՐԱՊՈՒՄԻ ԱՌԵՎԵՆԵԱՆ
1) Իտալական կրկնակի հաշւապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի
վերաբերեալ, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն:
2) Առեւտրական թուարանութիւն:
3) Առեւտրական թղթակցութիւն:
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ:
5) Վայելաբերութիւն եւ ուղղումն ամենալատ ձեռագրի:
Ընդունելութիւն ամեն օր: Պարագրամները սկսվում են 1902 թ.ի Սեպտեմբերի
15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ձայն յետոյ՝ 60 ռուբլի վճարով
ամբողջ դասընթացի համար:
Դասընթացը աւարտողներին արվում է, ֆինանսների նախարարութեան թոյլա-
տրված ծրագրի համաձայն, վկայագիր:
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնա-
դրին՝ Թիֆլիսում, Николасовская ул. № 46, ամենայն օր: Մտադր ուղարկվում է ճիւղ
Վերելում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրաւաճառանոցնե-
րում: Օտարադպրոցները գրեթէ գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց
պատիւ ծախս վճարելու: Դիմել է 3 ռ. 50 կոպէկ:
(հ. հ. հ. շ.) 30—35